



ԱՋԳԵՅԻՆ, ԻՆՂԵՐԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Դուքս իրձանքը ըրագրիրեւուն ճամբուն
ծախքը աւեռողին վրայ է ։
Էւրաքոյս վերաբերեալ Նամակ կամ որ և
իցէ գրուածին, խմբագրին պիտի ուղ-
ղուի, և ասոյց ճամբուն ծախքը խը-
զովն վրայ է ։

ቶሪካዊነት

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ի ԵՌՆ ԼՈՒՐԵՐ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Quanti

4ms

Հայաստանում առկա թիւն

ԲԵՂԵՐԵԿԸՆ

ԱՐԵՎԵԼԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(C_m-B-B-B*)

() .

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՆ

Գլխավոր կետը որ պատերազմին նպատակն է, սա է. պետք է Նշարպան ու քաղաքակրթութիւնը յաւիտեան ապահովենք (Ռուսիոյ անիրաւ և յա-

" Ընդեր, թէ որ առանց երոշմաւորու
 " թեան խաղաղութիւն մը ստորադ
 " բերնը, որով մեր թշնամին կարող ըլ
 " լայ ժամանակ վաւարիկը, և սոյն
 " սեյալ, որ տեքութեանց մէջ եղա

ԱՆԹՕՆԻ ՏԻՒՂԻՂԻԷ

« Թէ որ Լճաորիա Ռուսիոյ դէ-
ղէնք տանէ, նախ և առաջ զանկիա ր-
տիպելու համար է Դանուբէան իշխա-
նութիւնները պարզելու : Երբոր ս-
տիկա կոտորուի, Լճաորիա խաղ-
ղութիւն կ'ուզէ, բայց անանկ խաղ-
ղութիւն մը, որ ապագային համա-
Գերմանիոյ շահերը ապահովեն :

Եւ Վստճաի Ընքերուն վախճան
Թերեւս գոհացուցիչ չէ, բայց ձեռ
խորդ ալ չէ: Ի՞նչ որ պատերազմին ն
պատահը իջեալոյն իշխանը Դանու

եան իշխանութիւններէն դուրս հա-
նել ըլլար, պէտք էր որ դաշնակից զոր-
քերն հնար եղածին շափ շուտով Վա-
նուք երթային, բայց աս շարժմանը՝
որուն վախճանը կրնար փառաւոր յաղ-
թութիւն մը ըլլալ, պատերազմին եւ-
քին վրայք քիչ ազդեցութիւն կ'ու-
նենար: Վսիկէյ յաւաստեցիք ամենա-
մեծ յաջողութիւնը՝ աւելի տաճկաց
քաջութեանն ու դիմագրաւութեանը
արդէն ըրածը ընել կ'ըլլար: Վալաքիյ
վրայ քաջելը սխալմունք մը կ'ըլլար աս
պատերազմին գլխաւոր նպատակին մէջ,
որ Ռուսիոյ արեւելեան զօրութեան
կեդրոնին՝ այսինքն Սեփակթուրի հար-
ուած մը տալ է: Վսիկէյ է որ Ռու-
սիոյ կայսրը միշտ կ'սպառնայ Կոստան-
դնուպոլսոյ ու Վանուքի բերաննե-
րուն, անկէջ է որ Սեփակթուրի կ'ընդ-
ու իր անուան հին ու ազդեցութիւնը կը
ձգէ Փոքր Ասիոյ ծովագերեզմանը վը-
րայ: Սեփակթուրի կործանումը Ռու-
սիոյ զօրութեան կործանումը կ'ըլլայ
այն երկիրներուն մէջ, ուր իր զօրու-
թիւնը աւելի վառագար է Լեւոնտա-
յի: Պատերազմին ստուգ նպատակին
հասնելու միակայն միջոցն ասիկայ է:
Ռուսիոյ ինչո՞ւ համար շուտով չըրին
աս դործողութիւնը: Ինչո՞ւ համար
անգլիացւոց զօրքերը՝ նեղուցներուն
մէջ կենտրոն տեղ, շուտ մը Վրերմ
չեղան: Յայտնապէս անոր համար որ,
զօրքերուն ձամբայ ելած ժամանակը
չէր դիտողներ թէ Ռուսիա բան մը
չի պիտի կրնար ընել, և մէկ հարուա-
ծով Վանուքի եղբայրներն ու Պալ-
քանները առնելու կարող չի պիտի ըլ-
լար: Սեփակթուրի առաջին խրկումը
գունդերը քիչուր էին, և թէ որ 25
հազար հոգի հանած ըլլային Վրերմ,
ուստերը կրնային անոնցմէ կրնապա-
տիկ աւելի զօրքով վրանին գալ: Ըստ
համար նախ կէտքովու նոտան, և քա-
նի որ իրաց վիճակը լուսաւորուեցաւ,
նախ Իսկիւտար ու ետքը Վառնա
գացին:

« Բայց ինչո՞ւ համար Վառնա հաս-
նելուն պէս՝ դաշնակից բանակը ոչ
Վանուք և ոչ Վրերմ գնաց: Հաւա-

նական է, որ Վառնի վարանմունքը
ասոր քիչ մը արգելք եղած ըլլայ:
Վարձեալ, թէ որ Վրերմի առնուիլը
նպատակ մըն էր, այսու ամենայնիւ
պէտք էր որ դաշնակից զօրքերը ետ
դառնայր ստիպուէին թէ որ Վանուք
փաշան յաղթուէր: Ստուգ է, որ օս-
մանեան զօրքերը զարմանալի քաջութիւն
պատերազմեցան, բայց ամենեւին պա-
հասի զօրք չունենալուն, ուստեքը
կրնան ամփոփուիլ ու մէկ վայկեանէն
միւսը անոնցմէ մեծ զօրութեամբ վը-
րանին երթալ: Վառնի զօրաց ներ-
կայութիւնն աս կերպ փորձ մը կար-
գիլէր, և մէկ կողմէն ուստեքը վախ-
ցնելով՝ միանգամայն տաճկները կը
քաջալերէր: Կերեւալ որ դաշնակից
զօրապետները սպասեք են, որ ուրիշ
տեղութիւն մըն ալ իրենց պէս գերք
մը բռնէ, և Վառնայի մէջ իրենց նըս-
տիլը այն տեղութեան վարանմունքնե-
րուն պատճառով երկարեցաւ:

Վառնի կրնայ իրեն դիւրին եղած
շարժմունքներով Վանուքը Ռուսիոյ
զօրքերէն սրբել, ու դաշնակից զօրքե-
րուն թող տալ Սեփակթուրի երթալու:
Ըստ պարտաւորեալ է, բայց մինչեւ
այսօր արգիլուեցաւ Բրուսիոյ երկդե-
մի դիրքովն ու Ռուսիոյ կայսր պառ-
նալքներովը: Յայտնի է, որ ուստեքը
կրնան Վառնի մէջ իր վրայ յարձա-
կիլ, բայց հաւանական չէ որ ուստեք
զօրքերը՝ որ չի կրցան տաճկաց գէմ
գնել, կարող ըլլան դիւրաւ յաղթե-
լու Վառնի զօրքերուն:

« Եւ յուսանք, որ Վառնի զօր-
քերը Վանուքեան երկիրները մանե-
լու ըլլան նէ, դաշնակից զօրքերը կը-
նան Սեփակթուրի երթալ ամառը չե-
լած: Ռուսի ինքզինքն ալ ըլլայ նէ, մեր
թշնամիներն ուրախ ըլլալու մեծ բան
մը չեն ունենար: Ռուսիա մեղի փոքր
հարուած մը տուած կամ մեր տեղու-
թեան ամենափոքր մէկ մասին վրայ պա-
տերազմին աղէտները բերելու վախ
տուած չի կրնար ըլլալ: Ռուսաց նա-
ւատորմիները՝ քոցուած են՝ երբ մե-
րինները խաղաղութեամբ ծովերը կը
պտտին: Սեր զօրաց ներկայութիւնը

Կոստանդնուպոլսը պահպանեց և ան-
հրնար համարուած բանն ընել տուաւ
տաճկներուն: Ռուսիա աւրուեցաւ
Սիւլիսթիէի առջեւ, շատ անգամ յաղ-
թուեցաւ, և մօտ օրերս Վանուքի ե-
ղբքը կորսնցուց, և թէ որ Վանուք-
եան երկիրները բոլորովին չի կորսնցը-
ներ նէ, պատճառը ան է, որ իր ձեռ-
քը միացածն ստենը պատերազմի մը
ծախքն ու կորուստները չափեր: »

Պալթիկէն եկած վերջին լուրերը կը
ծանուցանեն, թէ յուլի 21-ին և 22-ին
անգլիական նաւախուժքը տասը մեծ
նաւերէ ու նոյնպիսի շուքաւոր ֆրիգա-
թաններէ ու քորվէթներէ բաղկացեալ,
և գաղղիական նաւախուժքը ու թը
մեծ նաւերէ և տասը թէթեւ նաւե-
րէ բաղկացեալ՝ Վանու կղզիներուն
մէջ երկաթ նետեր են:

Ըստ նաւախուժքներուն էն մանր
նաւերը սկսեք են Պամարուտ եր-
թալու, որ ան Լըշպեղադոսին մէկ
հատիկ ամառ նաւահանգիստն է: Վա-
նուած տեղեկութիւններուն նայելով,
Պամարուտի մէջ եղող ուստեք պա-
հասան զօրքերը 1500 էն աւելի չեն
եղեր:

Քօրքի ծովապետին տեղ, որ հի-
ւանդանալով Լնգիւրա գարձաւ, Պայմ
Պարթիսի ծովապետը անցաւ, և ինը
մեծ նաւերով Սիւլիսթիէի առջեւ կը
պտտուի ուստեք նաւատորմիդ արգի-
լելու համար:

Սեփակթուրի լրագիրը Տանիկէն
յուլի 29-թուով հեռագրական լուր
առած կը ծանուցանէ, թէ, անգլիա-
կան Իշլա և Վալըրա շուքաւոր ֆրիգա-
թաններն սկսեք են Պամարուտի ու լը
բախտելու:

Ռուսաց Չար անուն լրագիրը կը
ծանուցանէ, թէ Բաքեի իշխանը
առողջանալով՝ նորէն Վանուքեան բա-
նակին հրամանատարութիւնը ձեռք
պիտի առնէ:

Վիեննայի Լոպ լրագիրը յուլի 24-
թուով հեռագրական լուր կուտայ:

« Վ. Կարթէն Կայսեր սենեկա-
պետ Պաշքի կոմսը մասնաւոր պաշ-
տօնով մը հոս հասաւ Բրակայի շուք-
կառքով: Կրնան թէ Կոստանդնուպո-
լիս ալ պիտի երթայ: Պաշքի կոմսը
Կորչաքի իշխանին բնակած օթեանը
իջաւ: »

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վանուքէն եկած վերջին լուրերը
կը ծանուցանեն, թէ Ռուսերը Պաշ-
քէն քաջուր և Օսմանեան զօր-
քերը յիշեալ քաղաքը գրաւեք են:

Տրապիզոնէն յուլի 23-թուով հե-
ռագրական լուրերը կը գրեն մայրաքաղա-
քիս Վաղղիական Դաւաղադոսին:

« Կարթի ու Լըշպեղադոսի սուրհանդա-
կը աս առտու հասաւ, և լուր կը
բերէ, որ Օսմանեան և Ռուսի բա-
նակները միշտ գէմ առ գէմ կը կե-
նան: Սեփակթուրի գեռն արտաբերած
չեղաւ, բայց անտարակուսելի է որ
մօտ օրերս վճռողական պատերազմ մը
պիտի ըլլայ:

Հաղիւ երկու բանակները մէկ մէկէ
երկու ժամու ձամբայ հեռաւորու-
թիւն ունին, և շատ անգամ յառա-
պահներուն պահանջող զինուորները
մէկ մէկու հետ խօսակցելու չափ կը
մօտենան: Թէ որ Օսմանեան զօրքերը
Չիրիւկ տեղէի դաշտին մէջ Ռուսաց
հետ պատերազմի բռնուին, յաջողու-
թիւնն այնչափ ապահով չըլլար, բայց
թէ որ կարող ըլլան իրենց ամբողջ
տեղերը բերելու ձգելու Ռուսերը,
յաղթութիւնը փաստելու հնարաւո-
րութիւնը կ'եննայ: Օսմանեան զօ-
րաց յաւաքապահներուն կը հրամայէ
Իսմայիլ փաշան (Քաթի զօրապետը),
կեդրոնին կը հրամայէ Խուրշիդ փա-
շան (Կիւթի զօրապետը), Պաշապետ
Օպրիֆ Սուլթանօղլու փաշան ալ պա-
հաստի գունդերուն կը հրամայէ:

Հարաւ օրը Վաղղիական Սեփակ-
թուրը լուր բերաւ մայրաքաղաքս,

ԲԱՆԱՍԻՐԵԿԱՆ

ՕՍՏԻԿ

ԿԱՐ

ՆԱԽԱՍԱՀՄԱՆՈՒԹԻՒՆ

(Շարժում-ի-ն-ն-ն)

ԳԼՈՒԽ ԺԸ.

Աղբայի օձ:

Օտտիկ գեղեցիկ մարգագետին
(չայր) մը հասաւ. հոն քանի մը կը-
նիկներ տեսաւ որ մեծ փութով բան
մը կը փնտռէին. համարձակեցաւ ա-
նոնցմէ մէկուն մօտեցաւ ու հարցուց:
« Կարելի է որ պատիւ ունենամ ձե-
զի օգնելու ըրած փնտռութեանդ
մէջ: » — « Չըլլայ որ ընես, պատասխա-
նեց Վարուհին, մեր փնտռածին միայն
կնիկները կրնան գտնուիլ: » — « Հաստ
մանալի բան, ըսաւ Օտտիկ. կը նե-
րէք որ հարցնեմ, թէ ի՞նչ է ան բանը
որուն կանայք միայն գտնուի կարող
են: » — « Աղբայի օձ մըն է, պատաս-
խանեց կնիկ: » — « Աղբայի օձ մը,
կ'աղաչեմ, տիկին, ինչո՞ւ համար ար-
քայիկ օձ մը կը փնտռէք: » — « Սեր
տիտը Օլուկ իշխանին համար է, որ
աս մարգագետինն ծայրը գետին եղե-
քը տեսնուած գեղեցիկ տէրն է. մենք
անոր ամենախաղաղ գեղեցիկներն ենք:
Օլուկ իշխանը հիւանդ ըլլալով, բժիշ-

կըն անոր պատուիրեց որ վարդապետի
մէջ ելած արքայիկ օձ մը ուտէ, և
որովհետեւ աս հաղաւթաւ կենդա-
նին կնիկներէն միայն կրնայ բռնուիլ,
տէրերնին խոստացաւ, որ մեղին ար-
քայիկ օձ մը իրեն ամառը իր սիրական
կնիկը պիտի ընէ. ուստի կը ինքզինքն
թող տուր զիս որ փնտռեմ. փանդի
կը տեսնես թէ որչափ ծանր կը նստի
ինձի թէ որ ընկերներէս մէկը ինձմէն
առաջ գտնայ տանի: »

Օտտիկ թողուց Վարուհին ու ա-
նոր ընկերները, որ իրենց արքայիկ օձը
փնտռեն, ու մարգագետինն մէջէն
սկսաւ իր ձամբան շարունակել: Երբոր
առուակի մը եզերքը հասաւ, կանանչ-
ներուն վրայ պառկած ուրիշ կնիկ մը
տեսաւ որ բան մը չէր փնտռեր: Սե-
փակթուրը հասաւ մը ունէր, բայց
երեսը քողով մը ծածկուած էր: Ըս-
տիկը գէպ ի տեսակը ծռած կը հա-
ռաչէր, ու ձեռքը փոքրիկ գաւաղան
մը բռնած առուակին ու խոտին մէջ
տեղը եղած բարակ աւաղին վրայ գի-
րեք կը գէգէր: Օտտիկ հետաքրքրու-
թեամբ անոր դժգոհած տեսնել ու-
ղեց. ուստի կանայք մը մօտեցաւ,
Օ. գիրը տեսաւ, ետքը Վ. մը, զոր-
մայրաւ. յետոյ Տ. մը տեսնալով գող-
եղաւ: Երբոր իր անուանը վերջի եր-
կու գիրն ալ տեսաւ՝ ապշեցաւ մնայ:
Քանի մը ըտպէս անշուք կենալէն ե-
տք, վերջապէս ինքզինքնին գտաւ
« Ի՞նչ վեհանքն տիկին, ըսաւ հիւս-
կարով, ներեցեք ինձի պէս դժբաղդ-
օտարականի մը որ յանդգնի ձեզի
հարցունելու թէ ի՞նչ զարմանալի

պատահմամբ ՕՍՏԻԿ անունը ձեր
հրեշտակային մատուցներովը հոս տե-
ղըս դրոշմած կը տեսնէ: » Ըստ ձայնը,
աս խօսքը լսելուն պէս՝ տիկինը գող-
գողուն ձեռքով մը քօղը վերցուց Օ. ա-
տիկինն նայեցաւ. սիրոյ, զարմանաց և
ուրախութեան աղաղակ մը հանեց,
ու հոգին զանազան զգացմանց տակ
ճնշելով՝ անոր գիրին ինկաւ մարե-
ցաւ: Ըստ կնիկը նոյն իսկ Վարուհին
Բաքեի թագուհին էր, Օտտի-
կին ամենաաւերելի տիկինը, որ այն տա-
տիճան սիրելուն համար վերջը յան-
ցաւ որ կը դատէր, և որուն համար
ալ այնչափ վախ քաշէր էր: Քանի մը
վայրկեան իր զգայական կարողութիւնը
կորսնցուց Օտտիկ. ու երբոր աչու-
նէրը Վարուհին աչուքներուն դար-
ձուց, որոնք շփոթութեամբ մը ու
գորովանք խառն տկարութեամբ մը
կը բացուէին. « Սիւստանան զօրու-
թիւնը, որոնք, դուք որ տկար մահ-
կանացուաց բաղդը կը անօրինէք, վեր-
ջապէս կը յանձնէք ինձի Վարուհին:
Ո՛հ, ինչ ժամանակ, ինչ վիճակի մէջ
կը գտնամ զանիկ: » Ըստ լսելով Վ. ա-
գարտէին առջին ծռակի վրայ եկաւ,
ու ծակաւոր անոր տակը փռելին քօղեց:
Թագուհին վեր վերցուց զանիկ, ու
իր քովը առուակին եզերքը նստեցուց,
անգաղար. աչուքները կը սրբէր ու
արցունքները նորէն նորէն կը վաղէին:
Վրեթէ քսան անգամ խօսելու սկսաւ
ու հեծութեանէն չէր կրնար շարունա-
կել. կը հարցնէր թէ ի՞նչ գիպուածով
իրար գտան, ու յանկարծ անոր պա-
տասխաններուն առջեւ կ'առնէր ու-

րիշ հարցումներ ընելով: Իր քաջած-
գժբաղդութիւնները պատմելու կ'սկսէր,
ու անհամբերութեամբ Օտտիկին
գլխուն եկածներն իմանալ կուզէր:
Վերջապէս երկուքն ալ իրենց սրտին
այլալու թիւնը քիչ մը հանգարտեցը-
նելով, երիտասարդը համառօտիւ մը
պատմեց թէ ինչպէս եկեր ան մարգա-
գետինը ինկեր էր: « Բայց ի՞նչ դժբաղդ-
ու անհամբեր զգաց, ինչո՞ւ համար
քեզ աս անբնական տեղը կը գտնամ ա-
ղաղակի կերպարներով ու ուրիշ գերի-
կնիկներու հետ, որոնք բժշկին հրա-
մանաւ արքայիկ օձ մը կը փնտռեն
վարդապետի մէջ ելելու համար: »

« Ինչո՞ւ իրենց օձը փնտռած ժա-
մանակին, ըսաւ գեղեցիկ Վարու-
տին, ես ալ քեզի իմ քաջածներս պառ-
մեմ, որոնց համար զՎստուած չեմ
մեղադրեր քանի որ քեզ կը տեսնամ:
Վիտես որ իմ երկին՝ Թագաւորը՝ նե-
ղացաւ քու ամենասիրուն մարդ մը ը-
լալուդ, անոր համար իրիկուն մը որո-
շեց որ քեզ խղէ ու զիս թունաւո-
րէ: Երբէն գիտես, թէ ինչպէս Վստ-
ուած կամեցաւ որ պղտիկ համար թա-
գաւորին հրամանն ինձի իմացունէ:
Հաւատարիմ Վատորը՝ քեզ իմ հրա-
մանիս հնազանդեցնելէն ու ձամբայ
հանելէն ետեւ, ան գիշերը ծածուկ
ձամբէ մը սենեակիս մօտ, զիս առաւ
Օրոսմանայ մեհեանը տարաւ ու իր
միգ եղբորը յանձնեց: Ըստ իմ զիս ան
մեծ արձանին մէջ պահեց, որուն յա-
տակը տաճարին հիմանը ու կատարը
կամարին կը հասնի. կարծեցի թէ գե-
ղեցնան մօտ, բայց միգը զիս կը խնա-

Թէ անցեալ հինգշաբթիէն ուրբաթ լուսնարու դիւրեք Վառնայի մէջ հըր- գէհ մը պատահերէ անխոհեմութեան մը պատճառաւ և 10 ժամ պրոցիւր մեծ փնտ րըր է :

Աս հրդեհին վրայք մայրաքաղա- քիս մէջ լուր տարածուեցաւ , Թէ քաղաքին երեք մասին երկուքը և դաշ- նակից զօրաց բոլոր համարանոցներն ու պաշարներն այրեր են :

Մայրաքաղաքիս Վաղդիւրէն յառա- յալ լրագիրը կ'ըսէ , Թէ աս լուրերը բո- լորովին անհիմն են . դաշնակից զօրաց պաշարները այրած չունին բաց 'ի քա- նի մը կտոր բանակի վերաբերեալ նիւ- թերէ , և աս ցաւարի դէպքը որ մը անգամ չի պիտի ուշացնէ դաշնակից զօրքերուն ընկեր գործողութիւնը :

Բարձրագոյն Նաբոլէոն իշխանը Տօլուսայի մէջ ջերմէ (սրժմա) հիւ- լանդանալով , անցեալ հինգշաբթի Վառնայի մայրաքաղաքը հասաւ ինք- զինքը դարմանելու և առողջութիւնը գտնաւ համար :

Ուրբաթ օրը Վեհափառ Սուլթա- նին քարտուղարներէն մէկը բարձրա- սրտիւ իշխանին խրկուեցաւ Նորին կայսերական Վեհափառութեան ցա- լակցութիւնը յայտնելու :

Նոյն նպատակաւ հեռեւեալ օրն ալ բարձրագոյն Նաբոլէոն փաշան ա- ցելութեան գնաց Ր . Գրան կողմէն :

Կայսերական հրամանաւ՝ Վառնայի նախկին կուսակալ Օ. Խա- փաշան՝ Խարբերդի կուսակալ անուա- նեցաւ :

Վեռնիկի նախկին կուսակալ Սե- հեմէտ փաշան՝ Տուսլիի գաւառին կառավարիչ անուանեցաւ :

Բաղդի փաշան՝ Էքօրայի կառա- վարիչ անուանեցաւ :

Էքօրայի նախկին կառավարիչ Օման փաշան՝ Վեռնիկի կուսակալ անուանեցաւ :

Կիպրոսի տեղակալ Էբրիֆ փաշան Բարասիի տեղակալ անուանեցաւ :

Պիդայի նախկին կառավարիչ Ղե-

մալ փաշան Կիպրոսի տեղակալ անուա- նեցաւ :

Բարասիի նախկին տեղակալ Օ. ման փաշան Պիդայի քաղաքական կա- ռավարիչ անուանեցաւ :

Սպոյտայի նախկին համարակալ Հա- չիմ պէյը Սանասթըրի համարակալ անուանեցաւ :

Թըրհարայի նախկին գանձապետ Ֆէթուլլահ Էֆէնտին՝ Սէնթէշի տեղակալ անուանեցաւ :

Լպո իւլ Տահման Էֆէնտին՝ Նիպէի տեղակալ անուանեցաւ :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱՆԳՂԻԱ՝ Նախընթաց թուով ծա- նուցինք , որ պատերազմի ծախքերուն համար կառավարութեան ուղած 3 միլիոն լիւր սթէրլինի նպատակը յու- լին 25 ին հասարակաց խորհրդարանին մէջ վճարուեցաւ որ որով :

Աս առաջարկութիւնը որ թագու- հայն կողմէն պատգամաբոլ մը խոր- հրդարաններուն ներկայացաւ , եր- կար վիճաբանութիւններու առիթ տուաւ երկու խորհրդարաններուն մէջ ալ : Աս առթիւ կառավարութիւն պաշտօնեաները երկու արեւմտեան տե- րութեանց բռնելը ընթացքին վրայք ուշադրութեան արժանի խօսքերը ը- ըին :

Ի որո Քլարէնտոն հետեւեալ խօս- քերը ըսաւ ըրտերուն խորհրդարա- նին մէջ :

Մեր ամենէն բան չունինք Ասորիոյ տեղու- թեան ու Ռուսիոյ մէջ եղած խռովութիւններուն մէջ , և ամենէն ակնաւ չի պիտի կտրուի Ռուսիոյ տուած պատգամներն : Վեհափառ թագուհայն կա- ռավարութիւնը ամեն ժամանակ պարտաւոր պիտի ըլլայ պատերազմին նպատակը յաղթ փոխանի մը հաղթելու , որ է արդար ու պատուաւոր խաղաղութիւն մը , բայց անանկ պայմաններով , որ մեզի օրինաւոր թուի և աս մեծ երկրին շահուցը հետ համաձայնի :

Հասարակաց խորհրդարանին մէջ ալ ի որո Բալմէրթըն աւելի ազդե- լուութեամբ խօսեցաւ :

« Չեմ հոգ ընէր ըսաւ հառնալու , Թէ ո՞ր մեզի հետ պիտի միաբանի , ու ո՞ր գաղտնած պիտի կենայ : Աս երկու ազգերը (Վրացիս ու Գաղղիս) :

որոնք աշխարհի առաջին զինուորական ու ծովային տեղութիւններն են , կարող են խաղաղութիւնը ձեռք բերելու անպիտի պայմաններով , որ Ասորիոյ տե- պահութեամբ հարկաւոր կը թուին իրենց :

— Ինտարայի լրագիրները կը ծանու- ցանեն , Թէ Վնգիւրոյ տեղութեան Երեւելք խրկած բանակին նոր զօրքեր պիտի խրկուին : Օ. ինուորական Կալէի լրագիրը կ'ըսէ , Թէ չորս գունդ (ալայ) հետեւեալ ու չորս գունդ ձիաւոր պիտի խրկուի :

— Վնգիւրական Սթրէնի—Հէրալդ լրա- գիրը կը ծանուցանէ , Թէ անգլիան մեծութեամբ թնդանթ մը խրկուեք է Վնգիւրէն Պալմիի ծով : Աս թըն- գանթը չորս միլիոն ու կէս հեռաւու- րութեամբ ռուսի կ'արձակէ եղեր :

— Նոր հրատարակուած վիճակագ- րական ցուցակներու նայելով , պատե- րազմը մինչեւ հիմա արգելք չէ ե- ղած Վնգիւրոյ առեւտրական յաջողու- թեանը : Այս տարուան անցած հինգ ամսուանը մէջ Վնգիւրայէն գուրս ե- լած ապրանքներուն գինը՝ անցեալ տարուան նոյն ամիսներուն մէջ գուրս ելածներուն գինէն 631,548 լիւր և 1852 ին նոյն ամիսներուն մէջ ելածնե- րուն գինէն 7,935,066 լիւր սթէրլին աւելի եղեր է :

ՍՊԱՆԻԱ՝ Մատրիսի բնակչաց կող- մէն յանձնարարական ժողով մը կազ- մուելով , յուլիսի 17 ին հետեւեալ աղբրագիրը արուեցաւ Վ . Իշապէ- լա թագուհայն :

« Տիկին

« Ստորագրեալքս քաղաքացիք Րու- սիոյնի և թարգման փափարանաց և խնդրուածոց Մատրիսի ժողովրդեան որուն երեսփոխաններն ըլլալու պա- տիւ ունին , որոնքուհարաւորապէս անհա- ծուութեամբ Չեր Վեհափառութեանը կը ծանուցանեն , Թէ մայրաքաղաքիս և բոլոր ազգին գտնուած ծանրակշիւ պաշտպանները նկատելով , թագաւո- րական աթոռին համար ուրիշ վրկու- թեան միջոց չի մնար , բայց եթէ ժո- ղովրդեան ձեռքէն յափշտակուած ի- րաւունքները նորէն իրեն հատուցա-

նել , բարոյականութեան ու արդարու- թեան կանոններն յարգել , քովերեւոգ- հեռացնել այն նենգաւոր խորհրդա- կանները , որոնք իրենց անիրաւու- թիւններովն ու բռնութիւններովն տե- րութեան խաղաղութիւնը և ժողու- վրդեան իր արիւնովն ու գանձերովը ձեռք բերած սահմանադրութիւնները վտանգի մէջ ձգեցին : Մատրիսի ժո- ղովրդը սահմանադրական ժողով մը կուզէ , որ հաստատուի ու ապահով կերպով որոշէ տեղութեան քաղաքա- կան ու ընկերական կաղմութեան հի- մունքը :

Աս սահմանադրութիւններուն մէջ իբրեւ բարեկարգութեան սկզբնատա- րը և աղատութեան երաշխաւորու- թիւն՝ կը պահանջէ , որ ազգային պա- հապան զինուորութիւնը նորէն հաս- տատուի , որն որ մեր հայրենեաց այն- չափ պանծալի օրեր ընծայեց , և որուն փորձեալ անձնանութիւնները վե- հանձն արեւնով մը կը լուսեցաւ պատե- րազմի գաշտերուն վրայ : Ժողովուրդը ծանր տուրքերու տակ ընկձելով ու մաշելով , կը խնդրէ նմանապէս Չեր Վեհափառութեան , որ տուրքերը նը- ուաղին ու բեռերը թեթեւան : Ան- հարազատ փառասիրութիւններու և բաղդանդիւր մարդիկներու խաղաղիկ և զոհ ըլլալով մինչեւ հիմա , կը հա- մարձակի յուսարու , որ այսուհետեւ արժանաւոր ու առաքինի մարդիկ մի- այն ձեղի խորհրդակից պիտի ըլլան : Չեր Վեհափառութիւնը թող բարե- հաճի ընդունելու Մատրիսի բնակչաց զգայմունքները , որ ստորագրեալքս ամենայն հաւատարմութեամբ ձեռք կը հաղորդենք :

« Լատուած պահէ Չեր Վեհա- փառութեան կեանքը երկար տարի- ներ : »

Նոր պատասխան Վ . թագուհին յայտարարութիւն մը հանեց , որն որ բարի ազդեցութիւն մը ըրաւ և քա- ղաքը քիչ մը խաղաղեցաւ : Աս յայտա- րարութեան մէջ թագուհին ժողովրդ- դեան խնդիրները կատարելու խօսք կուտայ :

մէր ու ամեն պիտոյքս կը հոգար : Իսկ առտուան գէմթագաւորին գեղադու- րը ձեռքը արիւնի , մոլեխիւղէ , եղ- բորոսէ ու ակոնիտոնէ շինուած ըմպե- լի մը առած սենեակի կ'երթայ , ու- ըրիչ սպասաւոր մըն ալ կ'ապրոյ մե- տաքսեայ չուսնով մը քու տունը կ'եր- թայ , բայց մարդ չեն գտնար : Գատոր՝ թագաւորը բոլորովին խաբելու հա- մար , մեզ երկուքս ալ ամբաստանել կը ձեւացնէ . քեզի համար Նոյկաս- տան փակաւ կ'ըսէ , ինծի համար ալ Սեմիիս , ու իսկոյն մեր ետեւէն մարդ կը հանեն , որ բռնեն ու ետ դար- ձունեն :

« Իսկ մնտուելու ելող սուրհան- դակները զիս չէին ճանչնար , վասն զի քեզմէ զատ մարդու երեսս չէի ցու- ցրցած , ան ալ երկուսն առջին և անոր հրամանաւր : Ուստի կերպարանքիս նկարագրութիւնը առնելով , զիս փնտ- ուելու ելան : Եթէ կատարեալ սահմանները հասած առնենին , իմ հասակս ունե- ցող թերեւ ինծմէ գեղեցիկ կնիկս մը պատահեցան որ լալով կը թափուէր : Լուսնը կասկածելու միտքերնին գրին , Թէ Բաբելոնի թագուհին ան է , ուս- տի բռնեցին ու Բաբելոն տարին : Թագաւորն առջի բերանը սաստիկ բարկացաւ անոնց սխալմանը վրայ , բայց քիչ մը ետք այն կնիկ աւելի մօ- տէն նկատելով խիստ գեղեցիկ գտաւ ու միտքարուեցաւ : Կնիկն անունը Սիսուֆ էր : Եթէ իմացայ , որ աս անունը Եթիոպացուց լեզուաւ գեղե- ջիկ կամեա՞ծ կը նշանակէ եղեր , և բա- տուգիւ այնպէս էր . բայց որչափ կա-

մահած այնչափ ալ վարպետ էր : Սո- տարտին զինքը հաւնեցուց , ու ան սաստիճան անոր խելքին տիրեց , որ անոր թագուհի եղաւ : Ան տանել իր բնութիւնը՝ բոլորովին երեւան ելաւ , առանց երկիւղի համարձակ ինքզինքը իր երեւոյնութեան խենթութիւննե- րուն տուաւ , Նախ ուղեց որ ծերունի քրմապետը , որ ամառուութիւն (տամ- լա) ունէր , իր առջեւ պարէ . ան ալ յանձն չառնելուն վրայ սաստիկ հա- լածեց : Յետոյ իր մեծ վահանակին հրամայեց որ իրեն շաքորեղէն քաղա- (պէօրէկ) մը լինէ , վահանակիւր պարապ տեղը համոզեց , որ ինքը քաղաքագործ (պէօրէկ) չէ . բայց հարկ էր քա- քարը շինել , և վաճառուեցաւ քիչ մը երաժ ըլլալուն համար : Սիսուֆ անոր տեղը մեծ վահանակիւր անուանեց իր գաճաճը , ու առնալ պարի պաշտօնն ալ սպասաւորի մը տուաւ : Ահա ասանկ Սիսուֆ կառավարեց Բաբելոնը : Սեմի մարդ իս կը յիշէր , Թագաւորը որ մինչեւ իս թուանաւորել ու քեզ խղճել ուղած վայրկեանը բարի էր , կարծես Թէ իր առաքինութիւնները աս գե- ղեցիկ կամահաճին վրայ ունեցած չա- փազանց սիրոյն մէջ ընկղմէր էր : Նուի- րական հրոյն հանդէսին օրը եկաւ , ու իմ պահաւոր առձանիս ստջեւ է- ու անդաւալին աղօթքները արուստուած- ներուն Սիսուֆին համար : Աս ալ բարձր ձայնով արձանին մէջէն սրուա- յի : « Լատուածները չեն ընդունիր բռնաւոր թագաւորի մը խնդրուածքը , որ իր խելացի կնիկ մեռցնել ուղեց ու անոր տեղը խենթ մը առաւ , » ի

խօսքերս անանկ սաստիկ խռովեցին Սոտարտը , որ գլուխը դարձաւ : Տուած պատգամս ու Սիսուֆին բռն- նաւորութիւնը բաւական էին անոր դատումը կործանելու , և քանի մը օրէն խենթեցաւ :

Աս իմարութիւնը՝ որ երկնառաք պատուհաս մը երեւցաւ , ապտամ- բութեան առիթ եղաւ : Ժողովուրդը ստը ելաւ , զէնքի վաղեց : Բաբելոն , որ երկար տան անգործ թմրութե մը մէջ թաղուած էր , յանկարծ ստակիկ քաղաքական պատերազմի մը թատրոն եղաւ : Սիսուֆ պէս զիս արձանին մէ- ջէն հանեցնելու կողմնակցութեան մը գլուխ գրին : Գատոր Սեմիիս վաղեց քեզ Բաբելոն կանչելու համար : Վր. կանիայի իշխանն ալ աս գէշ լուրերը լսածին պէս՝ զօրքով Բաբելոնաւան ե- կաւ մտաւ ու երրորդ կողմնակցու- թիւն մը հաստատեց : Նախ թագա-ւորին վրայ յարձակեցաւ , որն որ իր խենթ եգիպտացի կնիկը հետ անոր գէմը վաղեց : Սոտարտ զարնուեցաւ մեռաւ , Սիսուֆ ալ յաղթողին ձեռքն ինկաւ : Բաբելոնաւոր Վրկանիոյ իշ- խանին կուսակիցները զիս ալ ձեռք ձգեցին ու Սիսուֆին հետ անոր առ- ջեւ տարին : Պիտի բերկրին անշուշտ իմանալով որ իշխանը զիս Սիսուֆէն աւելի գեղեցիկ գտաւ . սակայն պիտի ցաւիս երբոր ըսեմ , Թէ զիս իր կա- նոններն պահեց ու վճարողական կեր- պով մը ըսաւ , որ պատերազմի երթա- լու վրայ ըլլալով , երբոր գաւառայնէ քովս պիտի գայ : Եթեւակայէ իմ տըրա- մութիւնս : Սոտարտայ հետ ունե-

ցած կապս քակուած էր . ալ կրնայի Օտարիկն ըլլալ , ու ան բարբարոսին շղթաներուն մէջ լինիլ : Աս իմ կար- դիս ու զգայմանցս համաձայն գոռոզ կերպով մը պատասխան տուի անոր : Սիսուֆ լսած էր որ Սոտուած իմաստի- ճանս եղողներուն անանկ վսեմութիւն մը կուտայ , որ անոնց մէկ խօսքն ու մէկ նայուածքը՝ էն յանդուգն մարդը անհա- ծութե կը բերէ : Աս թէ և թագուհիի մը պէս խօսեցայ , բայց նախնայի տեղ զբուեցայ : Սոտարտուան վրկանային ինծի խօսք մը ըսելու անգամ արժան չի սեպելով , ըսաւ իր ներքինին , Թէ ես լըբե կին մըն եմ , բայց իս գեղե- ցիկ կը գտնար . ուստի պատուիրեց որ վրաս հոգ տանին , ու սիրուհիներուն պէս նային , որպէս զի մարմնոյս գոյնը կենդանանայ , ու անոր սէրը վայելե- լու աւելի արժանի ըլլամ , երբոր կամ- քն եղած օրը զիս պատուելու ըլլայ : Իսկ իրեն , Թէ ինքզինքս կ'ապանեմ . այս խօսքիս ծիծաղելով պատասխանեց , Թէ զիւրին բան չէ մտնելը , և Թէ այս տեսակ բերաններու ինքը աղէկ վարժուած է . ու թուութիւն մը վանդա- կի մը մէջ դրոյող մարդու մը պէս ան- հոգ թողուց գնաց . ինչ սոսկալի վի- ճակ աշխարհիս առաջին թագուհին համար , մանաւանդ այնպիսի օրոյ մը , որ Օտարիկն էր : »

Օտարիկ աս խօսքերը լսելուն՝ անոր ոտքն ինկաւ ու արցունքներով թըր- ջեց : Սոտարտէ գորովանօք մը զանի- կա վերցուց ու պատմութիւնը այս- պէս շարունակեց . « Բարբարոս մար- դու մը իշխանութեան տակը և խենթ

